



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ն Ա Խ Ի Ջ Ե Ի Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿՏԱԿՈՎ, ԶԳՈՒԱԾ ՓՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Տանըհինգ տարիէ մը իվեր ազգային լրագիրներէն ոմանք, այսինքն Կալիպթայի Ազգասերը, եւ անկէջ առնելով՝ Զմիւռնիոյ Արշալոյսը, արթընցուցին ազգիս մտադրութիւնը այն փողերուն վրայ որ Կալիպթայի բնակիչներէն ոմանք կտակով ձգեր են ատենով Նախիջեւանի եկեղեցեաց եւ դպրոցներուն համար: Այս կտակաւոր փողերուն պատմութիւնը բաւական հետաքրքրական է, մանաւանդ այս տարիներս որ աւելի գործունեայ ջանք մը կայ այն ազգային իրաւունքները ձեռք ձգելու. ուստի հարկ կհամարիմք այս տեղ ընդարձակ տեղեկութիւն մը տալ անոնց վրայ՝ վաւերական գրուածքներէ հանելով:

Հնդկաստանի կտակաւոր փողերուն գրելաւորները ասոնք են.

Ա. Կալիպթա բնակող Համատանցի Մսեհ (որ եւ Մասեհ կամ Աբգըմսեհ) Մարտիրոսեան Պապաճանեանց կամ Բաբաջանեանց ազգասէր անձը՝ 1794-ին մայիսի 50-ին կտակով թողեր է իւր ստացուածքին կէսը Նախիջեւանի դպրատանցը, հիւանդանոցին, աղքատանոցին եւ որբանոցին համար:

Բ. Նոյնպէս Կալիպթա բնակող Կեսարացի մահաթի Յակոբի որդի Եղիա անունով ուրիշ ազգասէր անձ մը, որ ծնած է եղեր Հալէպ քաղաքը 1799-ին մայիսի 9-ին, կտակով թողեր է Նախիջեւանի դպրատանը 5,000 սքայ ուռփի, որ է գրեթէ 12,500 ֆրանք, կամ

իրը 3,123 բուլլի արծաթ. (վան զի մէկ սխ ուսիին է 2 ֆրանք ու կէս, կամ իբր 62½ քոփէք):

Գ. Կատարինէ Խօջամալեան անունով Կալկաթացի տիկինը՝ կտակով թողեր է Նախիջեւանի բարեկարգութեանց, այսինքն բարեգործական տեղերուն համար՝ իւր ստացուածքին կէսը, որ է 2,342 սքայ ուսիի, այսինքն իբր 3,843 ֆրանք, կամ 4,461 բուլլի արծ.:

Դ. Սարգիս Ծատուր թողեր է կտակաւ 80,000 հուն, այսինքն հնգկաստանի ոսկի, որ է իբր 200,000 բուլլի արծ., այնպէս որ քանի մի ժառանգներուն վախճանելէն ետքը՝ այս գումարը երթայ Նախիջեւանի դպրատանը եւ տպարանին:

Այս չորս հրիտակներուն առաջինը ամենէն նշանաւորն է, այսինքն Պապաճանեան Մասեհինը, որոյ կտակը հրատարակուեցաւ տպագրութեամբ Կալկաթայի Ազգասէր անունով օրագրին մէջ 1846-ին հոկտեմբերի 3-ին, այսու յառաջաբանական տեղեկութեամբ.

« 100,000 ՌՌԻՓԻՔ.

« Հրատարակեմք իներքոյ յընդհանուր տեղեկութեան ազգիս՝ զօրինակ կտակի հանգուցեալ « Մասեհի Բաբաջանեան կամ Մարտիրոսեան, որով թողեալ է նա զմեծ ժառանգութիւն ստացուածոց վան Նոր Նախջուանու քաղաքին Հայոց, իներքոյ Սուրբ Դրիգոր Լուսաւորիչ անուանեալ եկեղեցւոյ եղեալ երկուց դպրոցացն Սրբոյն « Սահակայ եւ Մեսրոպայ: Որոյ մասին թէպէտեւ « ժամանակ առ ժամանակ գրեցան աստի առ « հոգեւորական կառավարութիւն տեղոյն, բայց « ո՛չ արդիւնաւորեցան: Մերձ 100,000 կ. ռուս « փեաց չափ զարդիս գոյք կան իծեռս Յիշատակաց « Դպրին Տէրութեան տեղոյս. զորս մարմէ իծեռս « բերել, եթէ միտ դիցի կտակին, եւ իներքոյ « յաւելեալ իմէնջ համառօտ ծանօթութեանցն:»

Մեր աւելորդ կհամարիմք ամբողջ կտակը տպագրել այս տեղ. բայց Նախիջեւանի համար թողուած գումարին վերաբերեալ ինչ խօսքեր որ կան մէջը՝ ամէնն ալ զնեմք ի տեղեկութիւն ընթերցողաց:

« Ամենասուրբ երրորդութիւն եւ մի աստուածութիւն, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, կեցո « զիս ներքոյ ստորագրող Բաբաջանի (եւ կամ « հասարակ կոչմամբ՝ Մարտիրոսի) որդի Մասեհի, « որ եմ հաւատով ուղղափառ քրիստոնեայ, ազ « գաւ Հայ, քաղաքաւ եւ ծննդեամբ Համադան « ցի, գործով վաճառական, բնակիչ Կալկաթա « քաղաքիս՝ որ իՀնդկիս, ընդ տէրութեամբ Ան « գղիացւոց. ամէն:

« Յամի Տեառն հազար եօթնհարիւր իննսուն « եւ չորք, Մայիս ամսոյ երեսնօջն, ես՝ յիշեալ « Մասեհի յառողջութեան ժամանակի իմում, ա « մենայնիւ զգաստ միտս եւ զգայարանս ունե « լով՝ հաստատեցի կտակս այս իմով ստորագրու « թեամբ: Յորում նախ յայտնեմ զամենայն ստա « ցուածս իմ՝ որ ունիմ ներկայ. որպէս ամենայն « յատկութեամբ իներքոյ գրեալ տեսանի: Այսին « քըն Առաջինն այս՝ զի մերձ Հայոց եկեղեցւոյն « ունիմ մին մեծ բալասանայ՝ տուն, որ ընդ լայ « նութեամբ տանն իհիւսիսոյ ցհարաւ, իներքոյ « շինուածոյն յարեւմտեան որմի անդ՝ ծայրէ ի « ծայր դուբաններ ² են. զոր յանցեալ տարւոջն « շինել ետու իհիմանէ հաստադեղոյս եւ բաշէն « կառուցմամբ, ծախելով ինմա քառասունեկինգ « հազար ռուփի սքայ: Եւ այս տանս սահմանն, « արեւելեան կողմն է նեղ եւ անելք բուջայ ³: Հա « րաւային կողմն է լայնարձակ եւ հասարակ քու « չայ: Արեւմտեան կողմն է փողոց վաճառի, որ « Չինի բազարի սկիզբն կոչի, ուր եւ իմ դուբան « ներն են: Իսկ իհիւսիսային կողմն է գաւիթն « եկեղեցւոյ, այսինքն յարեւելից առ յարեւմուտս « հաւասար չափոյ տանս երկայնութեան ուղղա « գիծ որմն ձգի. յայնկոյս որմոյն իհիւսիս՝ եկե « ղեցւոյ գաւիթն է. եւ յայսկոյս որմոյն իհարաւ՝ « հանդերձ որմովն իմ տանս բաժինն է, որպէս « տանս բիւլէն, այսինքն դաբալէն ⁴ եւս վկայէ: « Երկրորդ տունն՝ է եւս մերձ Հայոց եւ Լատի « նացւոց եկեղեցւոյն, եւ է սահմանակից առ յա « րեւմուտս եւ առ հիւսիս՝ Դարբիէլ Յովհաննէսի « տանն. առ յարեւելս՝ սհաթսազ ⁵ Մարգարի որ « դի նիկողոսի տանն. իսկ իհարաւ կողմն է հա « սարակ քուջայ, որպէս տանս բիւլէն եւս յայտ « նէ: — Երրորդ տունն՝ է սահմանակից առ յա « րեւելս Սաքսանլուեան Ստեփաննոս Յարութիւնի « տանն, առ հիւսիս՝ հեթանոս Ամիրջանգի տանն. « առ յարեւմուտս՝ Դաւիթ Ստեփանի տանն: Իսկ « իհարաւ կողմն է հասարակ քուջայ, որ եւ ներ « կայ իսոյն տանս բնակիմ:

« Բաց յայսցանէ այլ եւս ունիմ ինձ կայք սանա « դով ⁶, չիթով ⁷, եւ խսէբագրով ⁸ պահանջմունս, « որպէս ամենայն հարկաւոր թուղթքն եւ տնե « ռիս բիւլէն ⁹, փաթէքն ¹⁰, եւ այլն՝ յերկաթեայ « սանդղոջս գտանելոց են: Եւ զայս եւս յայտնեմ, « զի ես իսկզբանէ անտի՝ ընդ ումեք ջամայ խարջ

¹ Բարձրաշէն:

² Խանութներ:

³ Փողոց:

⁴ Մուրհակ:

⁵ Ժամագործ, սահարճի:

⁶ Յետկար, սէնէտ:

⁷ Մուրհակ:

⁸ Հաշուեգիր:

⁹ Տան մուրհակ, կալուածագիր:

¹⁰ Արտօնագիր:

«չեմ պահեալ երբէք՝ ըստ ծիսի վաճառականաց.
«վասն որոյ ահա Յշմարիտն խոստովանիմ առա-
«ջի Աստուծոյ, որ մինչ ինեղկայ Թարիղս՝ ամե-
«նեւին ումեք չպարտիմ ինչ սանադով, չիմով,
«կամ խսէբագրով: Ուրեմն եթէ որ պահանջես-
«ցէ ինչ՝ անընդունակ արասցեն: — Յետ այսորիկ
«այժմ իմ վերջին կամքս եւ պատուէրս յայտնեմ
«վասն վերջին աւուրն իմ, եւ մանաւանդ վասն
«իմ ամենայն ստացուածոցն եւ կայիցն եւ կամ
«վասն այլ ինչ հարկաւոր պատահմանց. զորս ա-
«մենայն աստ իմ զմեզս ինչից հատոր բանս բո-
«ւանդակեմ, որ է այս. այսինքն Ա. Հատոր. . .

«Գ. Հատոր: Երբորդ պատուէրս յայտնեմ կը-
«տակակատարացն իմոց. զի իմ ամենայն կայքն,
«այսինքն վերն յիշեալ տներն՝ եւ այլն, զորս
«ներկայ ունիմ, եւ կամ զորս այսուհետեւ ըս-
«տացայց Աստուծով, այսինքն զլնի մահուանն
«իմ, ամենայն որ ինչ կայք գտանիցին ինձ ի
«վերայ աշխարհիս, զայն ամենայն միանգամայն
«ահա իկենդանութեանս իմում գրովս հաստա-
«տեցի ի ժառանգութիւն ներքոյ յատկացեալ տե-
«ղեացն այսպէս: — Իմ ամենայն կայքն տասն եւ
«վեց բաժին եւ կամ մասն համարելով, ինոյն
«տասն եւ վեց մասնիցն՝ ումն մասն վախմ ա-
«րարի՝ եւ կատարեալպէս ետու Ազոֆ՝ գաւառոջ
«նոր Նախիջեւանու քաղաքի Հայոց բարեկար-
«գութեանց: Այսինքն երկու մասն դպրատանցն,
«երկու մասն աղքատանոցին, երկու մասն հի-
«ւանդանոցին, եւ երկու մասն որբոց տանն. առ
«իմալ անդ ինոսա ինձ յիշատակ իբաւութիւն
«մեղացս՝ եւ իմ իմարութիւն ազգին մեր: — Եւ
«մնացեալն յումն մասանց վեց մասն թողուլմեմ
«մնալ վասն Կալկաթայ քաղաքիս Կորտ աֆ-Ռի-
«կուէշտի բանտարկելոցն, այսինքն Փոքր Զի
«բանտարկելոցն: — Եւ երկու մասն թողուլմեմ
«մնալ վասն Կալկաթայ եկող Հայոց ազգ դարի-
«բականացն, այսինքն Հայաստան աշխարհիցն
«մեր ազգ դարիբական աղքատ բիւուզիզար՝
«մարդկանցն՝ որք եկեսցեն աստ: — Որպէս վերն
«գրեցի Թէ իմ ըստադն տասն եւ վեց սամ խը-
«սէպլի, ահա այս երեք տեղեաց բաժինն եղեւ
«տասն եւ վեց սամ: Որպէս վերն սամ արա-
«ծիցն յայտնի այ: — Արդ աստանօր վերն յիշեալ
«սամատէրերոցիցն, եւ նոցա կողմանէ տեղս ե-
«ղեալ վէքիւներիցն՝ որք իմ կտակակատարը սէտք
«է լինին, ինոցանէ եւս խնդրում եմ եւ պատուի-
«րում եմ նոցա՝ որ մշտապէս հաւատարմաբար հե-
«տեւող եղիցին տների մարամաթին՝ եւ քրեհով՝

«տալոյն, որ մի՛ գուցէ անմարամաթ եւ դատարկ
«մնալով տներն քանդվին, եւ աղքատքն իմ ին-
«թարութենէ զրկուին: Ուրեմն պատուիրում եմ զի
«իմ կտակակատարքն՝ այսպիսի հաւատարմաբար
«հոգացողութեամբ յամենայն տարւոջ Գեկտեմ-
«բեր ամսումն, իմ ըստադի նոյն տարէն եկա-
«մուտն ջամայ արասցեն. եւ ջամ եղած մապլա-
«ղիցն՝ նախ իւրեանք՝ ֆի հարիւրին հինգ իւրեանց
«հախսայ վեր առցեն. յետ այնորիկ եւս տների
«մարամաթի, խազնի, եւ վերն յիշեալ երեւոն
«եւ մին ուրիւի մասական խարչն, եւ կամ այլն
«վեր առցեն, եւ ապա մնացեալ մապլաղն վերն
«գործիս համեմատ տասն եւ վեց սամ արասցեն.
«ումն սամն նոյն յառաջակայ Զանէր՝ ամսումն
«առաքեսցեն ինոր Նախիջեւան բարեկարգու-
«թեանց կառավարչաց ձեռն: — Եւ երկու սամն
«էլ նոյն Զանէր ամսումն բաժանեսցեն Հայաս-
«տանիցն եկեալ դարիբական բիւուզիզար մարդ-
«կանցն: — Իսկ մնացեալն վեց սամն, Կորտ աֆ-
«Ռիկուէշտի բանտումն եղեալ քրիստոնեայ բան-
«տարկելոցն՝ քանի անձին պարտքն վճարելէ՝ որ
«բաւական լինիցի, էնքան անձանց պարտքն հա-
«տուցեն եւ իբանտիցն ազատեսցեն յաւուրս
«Մեծի Աւագ Շաբաթու պահոցն: Բայց եթէ ինոյն
«բանտին քրիստոնեայ անձինք չգտանիցին էն
«միջոցումն, եւ կամ գուցէ սակաւ անձինք գտա-
«նիցին, եւ յիշեալ վեց սամիցն աւելի մապլաղ
«մնացէ, առ այս պատուիրեմ, զի նոյն մապլա-
«ղովն ինոյն բանտումն եղեալ քուրթ եւ կամ
«հեթանոս բանտարկեալս ազատեսցեն. քանզի
«վերն յիշեալ տեղսն եւ կամ անձինքն են ինձ
«ժառանգ եւ սամատէր ամենայն կայիցն իմոց
«զլնի մահուանն իմ:

. . . «Ե. Հատոր: Հինգերորդ պատուէրս յայտ-
«նեմ ամենեցուն, զի իրութիւն եւ իկատարումն
«վերն յիշատակեալ բանից իմոց՝ ահա հաստա-
«տեցի ինձ Նախկին տեղակալ, առաջին կտակա-
«կատար եւ կատարեալ վէքիլ, նոր Նախիջեւա-
«նու բարեկարգութեանց կողմանէ տեղս եղեալ
«բանակատարսն կամ վէքիլն յիւրաքանչիւր ժա-
«մանակի ո՛վ եւ իցեն. որպէս ներկայ են Պարոն
«Ներսէս Տօֆաննէս, եւ Պարոն Դիոնեսիոս Հայ-
«րապետեան. վասն որոյ հաստատեմ, զի սոքա
«եղիցին ինձ առաջին կտակակատար եւ կատա-
«րեալ վէքիլ: — Ուրեմն՝ որպէս ներկայ սոքա են,
«նոյնպէս եւ յետ սոցա՝ ո՛յք եւ կարգեսցին ինոր
«Նախիջեւանու Սրբազան Արքեպիսկոպոսէն եւ
«իբարեկարգութեանց կառավարչաց անտի, յայն-
«ժամ նոքա եղիցին ինձ առաջին կտակակատար
«եւ կատարեալ վէքիլ: — Այլ եւս վերն յիշեալ
«կտակակատարացն իմոց՝ որպէս ընկեր եւ օգ-
«նական, եւ ինձ երկրորդ կտակակատար եւ

¹ Թուական:

² Նուիրեցի:

³ Հին անունն միոյ մասին Կուսակալութեանն Կատարի-
նասարի, յանուանէ Ազով կամ Ազագ ծովուն եւ քա-
րին առեալ:

⁴ Ապերջանիկ, դժբաղդ:

⁵ Նորոգութիւն, մերամէք:

⁶ Վարձով, քիւրս:

⁷ Գումարներէն, մեկտաղ:

⁸ Յունուար:

«վէքիլ հաստատեմ լինիլ Կօրտ աֆ-միկուէշտի
«կուժիշիներն, այսինքն Կօրտ աֆ-միկուէշտի դա-
«տաւորաց զառաջին դատաւորն՝ յիւրաքանչիւր
«ժամանակի ո՛վ եւ իցէ: — Որ եւ աստ յիշեալ
«երեք պարնիքն՝ ինձ վէքիլ եւ կտակակատարք
«են, վասն որոյ եւ երեքն իմիասին մին խոր-
«հրդով աշխատեսցեն իփառս Աստուծոյ կատա-
«րել աստ գրեալ զպատուիրանս իմ: — Արդ վեր-
«ջաւորութիւն տալով բանից իմոց յայտնեմ, զի
«այս է իմ վերջին կամք եւ պատուէրն. որպէս
«աֆա վասն հաստատութեան եւ հաւաստու-
«թեան՝ չորք թուղթք մին օրինակ գրեցի, եւ ի
«ներկայութեան վկայիցն ստորագրեցի եւ կնքե-
«ցի իփառս ամէնօրինեալ Հօր եւ Որդւոյ եւ
«Հոգւոյն սրբոյ՝ միոյն Աստուծոյ, որում փառք
«եւ երկրպագութիւն մատուցցի անզրաւ յաւի-
«տենիւ. ամէն:»

«Եղեւ յամի Տեառն հազար եօթնհարիւր իննը-
«սուն եւ չորք, ի Մայիս ամսոյ յերեսնօրն:

«Ե Կալկաթա:

„ՄԱՍԵՆ ԲԱՐԱՋԱՆ ԿՈՒՄ ՄԱՐՏԻՐԱՍ:

„Վկայ եմք որ ստորագրեաց եւ կնքեաց, հռչակեաց
„եւ հաւանեաց վերն յիշեալ Մասեն Բարաջանն (կամ հա-
„տարակ կոչմամբ Մասեն Մարտիրոսն) քե այս իմ կը-
„տակն այ եւ իմ վերջին կամքն այ, եւ իւր խնդրանքն մեր
„անունն գրեցիք աստ որպէս վկայ: — Վերն գրածն չորք
„մին օրինակ գոյով համեմատ միմեանց մի եւ նոյն ժա-
„մանակումն ձեռնագրեաց առաջի մեր:

«ՏԵՐ ՍՏԵՓԱՆԿՈՍ ՔԱՆԱԿԱՅ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ:

«ՄԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԲԱՐՈՒՄԵԱՆՅ:

«ՅՈՎԱՆՋԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՅ:»

«Յայտնի լիցի ամենեցուն, զի ես ներքոյ ստո-
րագրող Համադանցի Բաբաջանի որդի Մասենիս
(որ հասարակ կոչմամբ Աբղւմասենի Մարտիրոս
կոչիմ) յամի Տեառն 1794 Մայիս 30, չորք դանայ
իմին օրինակ կտակ ունիմ գրեալ, յորոց եւ մինն
առաքեալ եմ ինոր նախիջեալն: Եւ այժմ վասն
ներկայ իմ առաւել հարկաւորութեան եւ օգտին,
իյիշեալ կտակոջն իմ յայտնեալ յերից տանց մինն,
այսինքն է՝ մեր եկեղեցւոյ սահմանակից իմ նո-
րաշէն մեծ բալխանայ տունն՝ իւր ամենայն սահ-
մանօքն հանեցի իմ ըստադիցն եւ ինոյն կտակի-
ցրն. եւ ամենայն յօժարութեամբ իմով կատարե-
լապէս վախժմ արարի եւ ետու յատկացեալ եւ
առանձին՝ նոր նախիջեալն քաղաքի Սուրբ Գրի-
գոր Լուսաւորչի անուամբ աւագ եկեղեցւոյն,
անմասն առնելով այսմ տանս զմիւս սամատեար-
սըն, որ իկտակին կան: Եւ զփոխարէն տանս այս
ստացայ եւ հաստատեցի ինձ յիշատակ եւ իժա-
ռանգութիւն հոգեւոր՝ գլխեալ Սուրբ Լուսաւոր-
չի եկեղեցւոյ սուրբ Սահակ եւ սուրբ Մեսրօպ ա-
նուամբ զերկուսին դպրատունսն: — Իմ յիշեալ
տանն գին եղի յիսուն հազար ռուփի: Եւ յիշեալ

դպրատանցն եւս մինչ հարկաւոր այ ունել վասն
տարեկան խարջին քառասուն հազար ռուփու
մուդաթ, վասն որոյ եւ ես իմ տանս եկամուտն
քառասուն հազար ռուփու եկամուտ խսեպելով՝
այսպէս տուրեւառութիւն արարի, որ յիշեալ իմ
տունն մշտնջենաւոր վախժմ մնացէ յիշեալ Լու-
սաւորչի յեկեղեցւոյն՝ սակա կառավարութեան
յիշեալ երկու դպրատանցն: Նմանապէս եւ յի-
շեալ դպրատանցն մշտնջենաւոր իմ յիշատակաւ
մնացեն ինոր նախիջեալն, եւ իտպեալ գրեանս
յիշատակեսցին: Ուստի եւ արդէն իսկ աֆա խոս-
տանամ առաջի Աստուծոյ եւ մարդկան, ոչ եւս
իշխել այսուհետեւ իվերայ յիշեալ տանն եւ նո-
րին եկամտին իբրեւ տէր, այլ միայն՝ ցորքան
կենդանի մնացից եւ, գլխեալ տունն եւ իւր ե-
կամուտն ինքեքոյ կառավարութեանս պահելով
իբրեւ իկողմանէ նոցա գործակալ, հաւատար-
մաբար զամենայն եկամուտն ժողովեցից, հար-
կաւոր շինելիքն շինեցից, եւ մնացեալ եկամտովն
եծէ յիշեալ տանն մերձ կամ Չինու բազարումն՝
կամ յափն գետոյն տունն՝ դուբան՝ գուդամ՝ գաթ՝,
եւ զմին պատահեսցի իվաճառս, զայնոսիկ եւս
զնեցից դարձեալ իժառանգութիւն յիշեալ դըպ-
րատանցն: Եւ որպէս յիշեալ տան եկամուտն,
նոյնպէս եւ նոր ստացելոց զեկամուտն առաքե-
ցից ինոր նախիջեալն բարեկարգութեանց կա-
ռավարչաց ձեռն: Նմանապէս եւ յետ իմ մահուա-
նըն իյիշեալ կառավարչաց աստ կարգեալ օրդնին՝
յաջորդելով զտեղի իմ, գլխեալ տունն եւ զնորին
եկամուտն ամենայն, եւս եծէ նոր ստացեալ
տունք եւ այլն իցեն ինչ ընդ այնոցիկ, եւ զնո-
ցին ամենայն եկամուտսն զամենայն որոշելով եւ
յատկացուցանելով յիմ ըստադիցն անպակաս եւ
անթերի տիրեսցէ: Ջանշարժսն պահեսցէ ինքե-
քոյ կառավարութեան իւրոյ իբրեւ տէր, եւ ըզ-
շարժելիսն առաքեսցէ ինոր նախիջեալն: Եւ ի
հաստատութիւն այս տուրեւառութեանս եւ վախ-
մարարութեանս իմ, մին գուլմօհր՝ ոսկի բէհա-
նայ՝ յինք առի իյիշեալ կառավարչաց օրդնի Տէր
Ստեփաննոս Տէր Յարութենէն, ըստ ծիսի տունս
վաճառողաց: Ընդ այս եւ վասն բառնալոյ զա-
պագայ փոփոխմունս, ուծսուն հազար ռուփի
սքայ գունահիքարի տալոյ պարտական կապեցի
զիմ անձն, կայքն, օրդնին, կտակակատարն,
ժառանգն եւ անուանեալն յիշեալ կառավարչացն
եւ կամ նոցա օրդնի յիշեալ Տէր Ստեփաննոսին,
եւ ապագայ նորին տեղակալ յիշեալ կառավար-
չաց օրդնուն՝ այսու պայմանաւ:

«Այսինքն եծէ վերն յիշեալ վախժարարութիւ-
նըս ստեցից կամ փոխարկեցից, հանելով իյիշեալ
Լուսաւորչի յեկեղեցւոյն կամ ըստ բոլորին եւ

1 Պարոնայք, պարոններ:

2 Շտեմարան, մթերանոց:

3 Գործակալ:

4 Կիւլմէօհր, ոսկի Հնո՛ւնց:

5 Առ հաւատարեայ:

կամ ըստ մասին, իւրք ինչ կերպիւ եւ պատճառաւ, յայնժամ յիշեալ ուժսուն հազար սքայ ռուփի գունահարին հատուցից եւ եւ կամ իմ օրդնին եւ այլն՝ յիշեալ կառավարչացն եւ կամ նոցա օրդնուն: — Արդ եւ զայս յայտնեմ, զի այսու զյիշեալ կտակն իմ ոչ իսպառ լուծանեմ. այլ միայն զայս յիշեալ տունն եւ իւր եկամուտն հանելով անտի իբաց յիշխանութենէ կտակակատարացն եւ ի ժառանգութենէ անդ յիշեալ միւս երկու սամատեարցն, զայլ մնացեալ ըստադն, կրտակն, կտակակատարքն եւ սամատեարքն, այսինքն ինմա յիշեալ պատուէին եւ երեք կտակակատարքն, եւ երեք սամատեարքն թողում դարձեալ մնալ հաստատուն առ իկառավարել եւ ի ժառանգել զմիւս տներն եւ ըստադն ըստ ցուցմանն եւ ըստ բաժանմանն, որ ինոյն կտակին տեսանի: — Յետ այսորիկ եւ վասն մեծի կասկածանացն զոր ունիմ ինենգաւոր եւ յանդադար թշնամեաց իմոց, ահա զյիշեալ եկեղեցւոյ սահմանակից իմ տան հիւսիսային կողման զորմն եւ յորմոյն իմոյ անտի մինչ զյիշեալ սուրբ տաճարի որմն, որ եկեղեցւոյ գաւիթն է, զնորին իսկ ձեւն եւ զչափն աստ իներքոյ նշանաւորեմ ընդ այս, եւ վասն ապագայ ապահով մնալոյ իմ ըստադին, եւ տանցն եւ այլն, եւ իմ վասն միամտեալ գնալոյ առ Տէր՝ զնոր նախիջեալնու բարեկարգութեանց կառավարիչսն, եւ կամ զնոցա օրդնին՝ ի վերայ իմ կտակակատարաց առ իմ կտակակատարութեան գործոյն, մշտնջենաւորական էմին եւ ինձ տեղակալ հաստատեմ ահա ըստ ամենայնի: Այսինքն յիշեալ կառավարիչքն եւ կամ նոցա օրդնին, իմ կտակակատարաց զգործսն առ իմ ըստադն՝ քննեսցեն եւ զամենայն իմ կտակին ներհակ եւ իմ ըստադիս վնաս գործքն ինչ՝ յորժամ տեսանիցեն, տիրաբար արգելցեն եւ աւերեսցեն: Եւ ի հարկաւոր ժամանակի՝ կարողութիւն ունիցին առանց հարցանելոյ միւս սամատեարցն եւ կտակակատարացն իմ, ինքնիշխանաբար ներհակիլ իմ ըստադիս վնասողացն եւ ոսոխացն, եւ ի դատաստան մտանել. եւ մինչեւ յերօպ եւս ապիւ առնել: Եւ իյայսպիսի պատահմունս՝ ամենայն մանրամասնաբար խսէպով եղեալ խարջն, որքան մապլաղ որ խարջած լինիցին, եթէ մինչ ի քառասուն հազար ռուփի եւս իցէ, իւր անցեալ ժամանակաց մուգաթովն՝ յիմ տներին եւ իմ ըստադին յեկամոցն՝ պարտական են հատուցանել իմ կտակակատարքն. որպէս եւ ահա պատուիրեմ յիշեալ իմ երեք կտակակատարացն, տալ անպատճառ: — Եւ վասն բարեպէս բերելոյ զամենայն հարկաւոր գործսն, եւ կամ զգանգատն եւ զյանդիմանութիւնս իւրեանց յայտնելն ի դատաստանի աստ, ի ձեռն իմ վէքիլ Վիլէմ Հիկ, եւ Բենջիմ Թառնէրին, եւ ի ձեռն Մստր Բարօս եւ Նայ Կօնսլերացն՝ յառաջացուցեն: Նոյնպէս եւ

իմ հաւատարիմ հեթանոս Մօհանայ Բաբուն, եւ իմ սարքար Կալիէրէն Դէյն, ամսական վարձիւր պահեսցէ յիշեալ իմ տեղակալ օրդնին՝ իսպասու իւր, քանզի սոքա են տեղեակ իմ ամենայն անցիցն: — Եւ ահա առ այս՝ զերկուս թուղթս գրեալ իմի յօրինակ, իներկայութեան վկայիցն ստորագրեցի, կնքեցի, եւ յանձնեցի յիշեալ Տէր Ստեփաննոս Տէր Յարութիւնին: — Այսու ամենայնիւ, զայսոսիկ ինձ պարգեւողին Աստուծոյ մատուցանեմ փառս եւ երկրպագութիւնս անզրաւ յաւիտենիւ. ամէն:

«Եղեւ յամի Տեառն հազար եօթն հարիւր ինըսուն եւ հինգ, Ապրիլ ամսոյ մինն, Իլալկաթա:

„ՄԱՍԵՀ ՊԱՊԱՅԶԱՆ ԿԱՄ ՄԱՏԻՐՈՍԵԱՆ:

„Վկայ եմք՝ որ ստորագրեաց, կնքեաց եւ յանձնեաց —

• ԷԼԻԱՋ ՄԻՆԱՍԵԱՆ:

• ՄՈՒՐԱԴ ԷԼԻԱՋԵԱՆ:»

(Այս տեղ դրուած է կտակին մէջ Մասեհի տան պատին դիրքն ու չափը:)

Ազգասէր լրագիրը այս կտակը հրատարակելէն ետեւ, նոյն տարուան յաջորդ թիւոյն մէջ այս խորհրդածութիւնները կրնէ.

«100,000 Ռուբլի. — Անցեալ Թիւ Ազգասիրիս «հրատարակեցաք զստոյգ օրինակ կտակի հանգուցեալ Մասեհի Բաբաջանեան կամ Մարտիրոսեան Համադանցւոյ. զարդիս խնդրեմք զգործակցութիւն Պատուելի Պաշտօնակից եղբարց «մերոց իջմիւռնիա, ի Պօլիս եւ ի Տիֆլիս, որպէս «զի՛ եւ նոցա օրինակելով զսոյն յորդորեսցեն «զեկեղեցական կառավարութիւնն նոր Նախըւա- «նայ առ ի ձեռս բերել զայս գումար. քանզի Թէ- «պէտեւ յիշատակեալ է ի կտակին Թէ մի օրինակ «առաքեցաւ ի նոր Նախըւան, եւ Թէպէտեւ մեր «երկարօրէն եւս կարէաք գրել Թէ ո՛վ ով յազ- «գասիրաց ժամանակ առ ժամանակ գրեցին աս- «տի, բայց դիպուածով (°) իւրք ստոյգ պատճա- «ռացն տեղեկացաք, զի մինչ ցարդ ոչ եհաս նո- «ցա ստոյգ օրինակն:

«Արդէն իսկ Թիւ 36 Ազգասիրիս յանուանէ եւ «յականէ հրատարակէ զվերազնեայ բնակիչս ի «Կալկաթա. վասն որոյ Սրբազան Առաջնորդն նոր «Նախըւանայ, որպէս եւ Ատեան հոգեւոր կա-

„(°) Յանցանել զորոյս ի Պարսից ի Մեծն Պօլիս՝ ակա- «նատես եղև առ ժառանգս Տէր Ստեփանոսի յիշատակե- «լոյ ի կտակին՝ եւ օրինակի միոջ, յորում որոշակի յիշեր. «երէ ցրումն հօրանատենիկնց ամաց, ո՛չ չանաս- «ցեն հոգարարմութիւն Ազգին ի նոր Նախըւան ի ձեռս ի- «րն իւրեանց զայն ժառանգութիւն՝ ուրեմն այնուհե- «տեւ անցցի նոյն ի Տէր Ստեփաննոս եւ ի ժառանգս «նորս: Որոյ մասին գրեան եւս արարին առ ոմանս ի «Հեղկաստան:»

1 Բողոքել: — Խորհրդական:

(Ծանօթ. Մեար. Թադիսեանց.)

« ապարդուծեան նորա Բանդերձ վերակացուօք
 « Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ներքոյ երկուց դըպ-
 « րատանցն, Սրբոյն Սահակայ եւ Սրբոյն Մեսրոպ-
 « քայ, պարտին կարողական գիր գրել աստ առ
 « ո՛վ ինոցանէ եւ կամիցինն, եւ Բամեմատ զօրու-
 « թեան կտակին լիակատար իշխանութիւն տալ
 « նմա, զի պահանջեսցէ իյիշեալ Գարէն Յիշատա-
 « կաց՝ մինչ ցարդ զուտ գոյացեալ եկամուտ տանն,
 « որպէս եւ զյետ զյետէն այսուհետեւ: Բայց այս
 « կարողական պարտ է վաւերացուցանել իծեռն
 « Գատաստանարանի Կայսերութեան ինոր նախ-
 « ջուան: Կամ յայլուր, եւ իծեռն Արտաքին գոր-
 « ծոց նախարարի, կամ Գեսպանաց Կայսերու-
 « թեան Ռուսաց իՊարս կամ յեգիպտոս՝ յանդի-
 « ման առնել դեսպանի ուրումն Անգղիացոյ, եւ
 « ինմանէ եւս ընդունել զվկայութիւն իմաստա-
 « տութիւն ասացեալ կարողականին: Որով կարի-
 « ցէ Կարողացուցեալն աստ՝ անաշխատ եւ գրե-
 « թէ առանց ծախուց իծեռն բերել զմեծ զայս
 « գումար եւ առաքել անդ, զի վարեսցի առ ի
 « պէտս երկուց դպրոցաց, հիւանդանոցի, եւ ե-
 « կեղեցւոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի
 « նոր նախջուան՝ յԱզգ գաւառին Ղափու, որ
 « աղաւաղութեամբ Ազօֆ գրի իկտակին: »

Այս հրիտակին պատմութիւնն ընելէն ա-
 ռաջ քանի մը բացատրութիւններ ընեմք որ
 հարկաւոր են կտակին միտքը լաւ հասկընա-
 լու համար:

Նախ՝ Բաբաջանեան Մասեհը իւր բոլոր
 ստացուածքին կէսը կ'իթողու « Ազօֆ գաւառին
 նոր նախիջեւան քաղաքին Հայոց բարեկարգու-
 րեանց ». այսինքն, ինչպէս որ ինքն ալ կ'մեկնէ,
 դպրատուններուն, աղքատանոցին, հիւան-
 դանոցին եւ որբանոցին. ըսել է թէ բարե-
 կարգութիւնք ըսելովը՝ կ'հասկընայ բարեգործա-
 կան տեղեր, որ ռուսերէն կըսուի սովորաբար
 устроуднаго зкленуд (бодогодныя зведениа)
 եւ գաղղիարէն՝ հասսոսութիւնք բարեարարեան
 (etablissements de bienfaisance):

Երկրորդ, նոյն բարերարը կ'պատուիրէ որ
 իւր կտակակատարները թողած աներուն մա-
 րանքին՝ այսինքն նորոգութեանը, եւ քրեհով
 տայն՝ այսինքն վարձով տրուելուն մշտապէս
 հաւատարմաբար մտադիր լինին. եւ ամէն
 տարի այն տներուն եկամուտը տարւոյն վեր-
 ջը գումարելէն, ու եղած ծախքերը վրայէն
 հանելէն ետքը, մնացած գումարը 16 մաս
 բաժնեն, եւ 8 մասը ամէն տարի Յունուար
 ամսոյն մէջ յուղարկեն « ինոր նախիջեւան
 բարեկարգութեանց կառավարչաց ձեռն »:

Երրորդ, պարոն Մասեհը իրեն առաջին
 կտակակատար եւ կատարեալ վեհի (վոխա-
 նորդ) անուաներ է պարոն Ներսէս Յովհան-

նէս եւ պարոն Դիոնեսիոս Հայրապետեան
 ըսուած անձինքը, որ կերելի թէ նոր նախի-
 ջեւանցի են եղեր, գուցէ եւ յորդորողք Մա-
 սեհին՝ այն բարերարութիւնն ընելու իրենց
 քաղաքին. եւ անոնցմէ վերջը ամէն ժամա-
 նակ ո՛վ որ գտնուի նոր նախիջեւանի բարե-
 կարգութեանց կողմանէ Կալկաթային մէջ
 գործակալ կամ բանակատար. եւ այս գոր-
 ծակալները կուղէ որ ընտրուին « նոր նախի-
 ջեւանու սրբազան Արքեպիսկոպոսէն, եւ այն
 բարեկարգութեանց կառավարիչներէն »: Իսկ
 այն կտակակատարաց իբրեւ ընկեր եւ օգնա-
 կան նշանակեր է Կալկաթայի Քենողական
 Ատենին առաջին դատաւորը՝ ամէն ժամա-
 նակ ո՛վ որ լինի այն պաշտօնը կատարող
 (Court of requisit's commissioner):

Չորրորդ, պարոն Մասեհը կ'համարի եղեր
 թէ նոր նախիջեւանի սուրբ Գրիգոր Լուսա-
 ւորիչ եկեղեցւոյն մօտ արդէն կան երկու
 դպրատուն, մէկը սուրբ Մահակայ, միւսը
 սուրբ Մեսրոպայ անունով. ըսել է թէ կամ
 յիւրաւի նախիջեւանցիք Արղութեանց Յով-
 սէփ սրբազան Արքեպիսկոպոսին առաջնոր-
 դութեամբը բացեր են եղեր իրենց մայր
 եկեղեցւոյն քով այն դպրատունները, եւ կամ
 բանալու միտք ունին եղեր. եւ անոնց տարե-
 կան ծախքին համար հարկաւոր ճանչցուեր
 է 40,000 ռուբլիին տարեկան շահը, որ հա-
 րիւրին հինգ համբելով՝ պիտի ընէր 2,000
 ռուբլի. իսկ իրեն թողած տանը գին կտրեր
 է 50,000 ռուբլի, այսինքն 125,000 ֆրանք,
 կամ 31,250 ռուպլի արծաթ:

Հինգերորդ, բաց իվերոյիշեալ պարոն
 Ներսէս եւ պարոն Հայրապետեան անունով
 կտակակատարներէն, որ Մասեհի ստացուած-
 քը պիտի կառավարեն, որոշուած է եղեր
 Տէր Ստեփանոս Տէր Յարութիւնեան անու-
 նով քահանայն երրորդ կսակախատ, եւ Մասե-
 հին նորաշէն մէկ մեծ տունը իւր ամենայն
 սահմաններովը միւս երկու տներէն զատելով՝
 այն քահանային կառավարութեանը պիտի
 յանձնուի, ինչպէս որ կտակին վերջը աւել-
 ցուած կտորը յայտնապէս կ'բացատրէ: Այս
 տէր Ստեփանոս քահանային ժառանգները
 Կոստանդնուպոլիս կ'գտնուին, ինչպէս որ կը-
 վկայէ պարոն Մ. Թաղիադեանց՝ Ազգասէր լրա-
 գրին վերատեսուչը:

Յաջորդ յօդուածին մէջ կ'տեսնեմք թէ այս
 կտակին կատարմանը համար մինչեւ ցայժմ
 ինչ կարգադրութիւններ կամ թղթակցու-
 թիւններ եղեր են: